This project is funded by the European Union

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄՈՒՄ և ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ-ում գյուղատնտեսությունը ինչպես սոցիալ ժողովրդագրական առումով, այնպես էլ պարենային անվտանգության ապահովման և տնտեսական զարգացման տեսանկյունից հանդիսանում է որպես ազգային տնտեսության գերակա ճյուղերից, որի զարգացումը համեմատած այլ ոլորտների հետ առավել կախվածություն ունի զանազան ռիսկային գործոններից: Գյուղատնտեսությունում և հատկապես բուսաբուծության ճյուղում առավել արդյունքի հասնելուն հաճախ խոչընդոտում են բնական գործոնները՝ եղանակային պայմանների կտրուկ փոփոխությունները (ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ, ջրհեղեղ և այլն), տարաբնույթ վնասատուների և հիվանդությունների ի հայտ գալը:

Իրողությունները և վերլուծությունները վկայում են, որ նշված երևույթները Հայաստանի ագրոպարենային համակարգին հասցնում են հսկայական վնասներ և նույնիսկ անդառնալի կորուստներ: Մասնավորապես 2015թ.-ին ՀՀ Վայոց Ձորի Գոմք, Ազատեկ, Հերմոն և Տավուշի մարզի Լճկաձոր, Պտղավան, Ակնաղբյուր համայքների գյուղատնտեսական վնասների գույքագրման արդյունքների համաձայն նշված համայնքներում պտղատու այգիներից ակնկալվող բերքը նախորդ 3-5 տարիների ընթացքում 1 տարվա արդյունքներով

վնասվել է 60-100%-ով՝ բացառապես կարկտահարության և ցրտահարության ռիսկերի հետևանքով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնյաների տվյալներով բնակլիմայական գործոնով պայմանավորված՝ գյուղատնտեսության միջին հաշվով տարեկան վնասը կազմում է մոտ 20 մլրդ ՀՀ դրամ: Ցավոք որևէ պաշտոնական վիճակագրական տվյալ առկա չէ ՀՀ գյուղատնտեսությունում արձանագրված վնասների վերաբերյալ՝ ըստ ռիսկերի, ըստ մարզերի և ըստ գյուղատնտեսական արտադրանքի բաշխվածության կտրվածքով: Գյուղատնտեսական ռիսկերի հասցված վնասները վերականգնելու համար դեռևս միակ, լավագույն և արդյունավետ գործիք է հանդիսանում գյուղատնտեսության ապահովագրությունը:

Գյուղատնտեսության ապահովագրության մեջ առանձնացնում ենք հետևյալ խմբերը՝

1. Մշակաբույսերի և բազմամյա տնկարկների բերքի ապահովագրություն,
2. Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն,
3. Գյուղացիական տնտեսություններին պատկանող գույքի, գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ապահովագրություն:

Վերը նշված խմբերը տարբերվում են իրենց բնորոշ **ռիսկայնության աստիճանով**, **ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակով** և **ապահովագրական դեպքերի յուրահատկություններով:** Հայտնի է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների բերքի ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար կարող են հանդիսանալ բերքի ոչնչացումը կամ վնասումը կարկուտից, երաշտից, տաքության պակասից, գերխոնավացումից, փտումից, փոթորկից, պտտահողմից, ջրհեղեղից, սելաֆաջրերից, ոռոգման համակարգի ջրասակավությունից, տվյալ տարածաշրջանի համար արտասովոր այլ բնական երևույթներից, զանազան բուսական հիվանդություններից և վնասատու միջատներից, իսկ եկամուտների ապահովագրության պայմաններում, նաև ապահովագրված բերքի գների տատանումներից:

1. **Բերքի ապահովագրության դեպքում՝** միջազգային փորձն ուսումնասիրելով, առանձնացնում ենք ապահովագրության հետևյալ տարբերակները.

- **Վնասի փոխհատուցման պայմանով ապահովագրություն,** որն իր մեջ ներառում է անվանական ռիսկից և բազմակի ռիսկերից ապահովագրությունը

  Անվանական ռիսկից ապահովագրության դեպքում, պտղատու այգիների բերքը կարող է ապահովագրվել ապահովագրության պայմանագրում նշված մեկ կամ մի քանի ռիսկերից: Հիմնականում մեծ տարածում ունեն կարկուտի ռիսկից ապահովագրության պայմանագրերը:

  Բազմակի ռիսկերից ապահովագրության դեպքում ապահովագրվում են բերքին սպառնացող բոլոր ռիսկերը: Ապահովագրության պայմանագրում կարող են նշվել բացառություն համարվող ռիսկերը:

- **Ցուցիչի (ինդեքս) պայմանով ապահովագրություն**, որն իր մեջ ներառում է եղանակային ցուցիչի, Բերքատվության ցուցիչի և Բուսածածկույթի տարբերության ստանդարտացված ցուցիչի ապահովագորությունները:

Եղանակային ցուցիչի ապահովագրության դեպքում ռիսկ է համարվում եղանակային պայմանների շեղումները, մասնավորապես օրինակ տվյալ ջերմաստիճանի գերազանցումը կամ նվազումը, քամու արագությունը, անձրևների տեղումները և այլն:

Բերքատվության ցուցիչի դեպքում հիմք է ընդունվում ակնկալվող բերքի ցուցանիշը: Ապահովագրական պատահար է համարվում սպասվածից պակաս բերքի ստացումը: Բերքատվության ցուցիչով ապահովագրության դեպքում կիրառում են նաև վնասաբերության ցուցիչը, տվյալ դեպքում ապահովագրական հատուցումը բացառապես տրվում է պայմանագրով ամրագրված վնասաբերության ցուցնիշը որոշակի մակարդակը գերազանցելու դեպքում:

Բուսածածկույթի տարբերության ստանդարտացված ցուցիչով ապահովագրությունը հիմնված է բուսածածկույթի (վեգետացիա) զարգացման վիճակը գրանցող արբանյակներից ստացված տվյալների վերլուծության վրա:

Պտղատու այգիների բերքի ապահովագրության միջազգային փորձը մեկ կամ մի քանի ռիսկերից ապահովագրության համար՝ արտահայտված միջինացված ամփոփ ցուցանիշներով:

հ/հ	ԵՐԿԻՐ	Ռիսկեր	Ապահովագրական սակագին *(Կիրառվող տոկոսադրույք ապահովագրական գումարի նկատմամբ)*	Չհատուցվող գումար: Տնտեսվարողի սեփական մասնակցության չափը վնասի փոխհատուցմանը: *(Կիրառվող տոկոսադրույք ապահովագրական գումարի նկատմամբ)*
1	Ավստրիա	Կարկուտ	14%	10-30%
2	Իսպանիա	Կարկուտ, հրդեհ, ջրհեղեղ, անձրև, ցրտահարություն, քամի	10%	10-30%
3	Իտալիա	Կարկուտ, ցրտահարություն	13,8%	10-30%
4	Հունաստան	Կարկուտ	2,3%	10-20%
5	Պորտուգալիա	Կարկուտ, հրդեհ	18%	20%
6	Ուկրաինա	Կարկուտ, ցրտահարություն, փոթորիկ, հրդեհ	9,3%	20%
7	Ֆրանսիա	Կարկուտ, ցրտահարություն, քամի	8,6%	15%

Նշված սակագները կիրառվում են 60-70% վնասաբերության ցուցանիշի պայմաններում: Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվում է տրամադրված հատուցումների հանրագումարը հարաբերելով վաստակած ապահովագրավճարների հանրագումարին:

2. **Գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությամբ** փոխհատուցվում է կենդանիների անկումը, հարկադիր սպանդը, համաճարակները, հիվանդությունները, դժբախտ պատահարները, տարերային աղետների հետևանքով անասնագլխի ոչնչացումը, ինչպես նաև գողությունը:

3. **Գյուղացիական տնտեսություններին պատկանող գույքի ապահովագրությունը** գրեթե ոչնչով չի տարբերվում այլ քաղաքացիներին ու տնտեսվարող սուբյեկտներին առաջարկվող գույքի ապահովագրությունից: Այս դեպքում սովորաբար ապահովագրվում են գյուղացիական տնտեսությունների անշարժ և շարժական գույքը: Դրանց մեջ մտնում են գյուղտեխնիկան (կոմբայններ, տրակտորներ, բեռնատարներ և այլն), արտադրական շինությունները (գոմեր, պահեստներ կայլն), ինչպես նաև բնակելի տարածքները:

Բացի առանձին խմբերի համար նախատեսված անհրաժեշտ միջոցառումների և քայլերի իրականացումից շատ կարևոր է ուշադրության արժանացնել և իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք վերաբերվում են նշված բոլոր խմբերին և գյուղատնտեսությանը ընդհանրապես:

Գյուղատնտեսությունում ռիսկերի մեղմման և ապահովագրության արդյունավետ համակարգի ներդրման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ **միջոցառումները՝**

- **Իրավական դաշտի կատարելագործում՝** ճյուղում ապահովագրական գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և ներդրում, այդ թվում նաև ֆինանսական նորմատիվներին, ինչպես նաև պահուստներին ներկայացվող պահանջները,
- **գյուղատնտեսական կոոպերացիաների ստեղծում և զարգացում**, ինչը հնարավորություն կստեղծի մշակվող հողերի միավորման, ինչպես նաև չմշակվող հողերի մշակման համար՝ առավել արդյունավետ դարձնելով ապահովագրական համակարգի աշխատանքը
- **գյուղատնտեսության արդյունաբերականացում՝** արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի ներդրման միջոցով, մասնավորապես կարկտապաշտպան ցանցեր, կաթիլային ոռոգման համակարգեր, լիզինգային մատչելի ծրագրերով նոր սրաքավորումների ներգրավում և այլն,
- **գիտական, խորհրդատվական, ուսումնական և տեղեկատվական կենտրոնների ստեղծում և զարգացում**, ինչը հնարավորություն կտա ունենալու գյուղատնտեսության տարբեր ճյուղերի մասնագետներ, որոնց օգնությամբ և աջակցությամբ գյուղացիական տնտեսությունները հնարավորություն կունենան առավել մասնագիտացված և արդյունավետ եղանակներով կազմակերպել իրենց աշխատանքները,
- **Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում՝** ընդլայնելով վիճակագրական ցուցանիշների շրջանակը՝ հավաքագրելով նաև տեղի ունեցած

պատահարների և կրած վնասների վերաբերյալ տվյալներ,

- **գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ էլեկտրոնային մշակված տվյալների բազայի ստեղծում՝** գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագրի արդյունքներով:

Ամփոփելով կարողենք փաստել, որ իրականացնելով վերը նկարագրված միջոցառումները մենք հստակ քայլերով մոտենալու ենք գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի համատարած ներդրմանը: Սակայն վերը նկարագրված գործընթացներին զուգահեռ, հաջողության հասնելու համար, անհրաժեշտ և պարտադիր պայման է որոշակի տարածքներում, խոշոր տնտեսություններում, առանձին համայնքներում իրականացնել փորձնական (պիլոտային) ապահովագրական ծրագրեր՝ մասնավորապես իրականացնելով սահմանափակ ռիսկերից՝ կամ միայն օրինակ կարկուտի ռիսկից ապահովագրություն:

Իսկ արդեն համատարած ապահովագրական համակարգի ներդրման համար առաջին անհրաժեշտ քայլը ռիսկերի գնահատումն է: Ինչը հնարավորություն կտա գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման մեխանիզմների մշակման, հիմնավորված ապահովագրավճարների սահմանմանու կիրառման համար, որի արդյունքում կունենանք՝

- Գյուղատնտեսության ապահովագրության ռիսկերի գնահատման մեթոդաբանություն,
- Ապահովագրական պատահարների վնասաբերության հաշվարկի մեթոդներ,
- Ըստ հանրապետության տարածաշրջանների գյուղատնտեսական մշակաբույսերի, բազմամյատ նկարկների և կենդանիների համար ապահովագրական գումարների մակարդակի հաշվարկման մոտեցումներ,
- Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներդրման համար մշակված գործուն մեխանիզմների տարբերակներ:

Դեռևս 2018թ. նոյեմբեր ամսին ՀՀ ԿԲ կողմից ՀՀ ապահովագրական ընկերությունների քննարկմանն է ուղարկվել մի հայեցակարգ, որով առաջարկվում էր վերջիններիս մասնակցել ՀՀ գյուղապահովագրության գործակալության ձևավորմանը՝ Ավտոապահովագրողների բյուրոյի մոդելի նմանությամբ, որը հնարավորություն կտար վերջիններիս մասնակցել 2019թ.-2023թթ. ընկած ժամանակահատվածում իրականացվող ծրագրին:

Հայեցակարգի հակիրճ նկարագրություն՝

- **Ապահովագրավճարների սուբսիդավորում:** 5 մլն. Եվրո KFW բանկի կողմից և 5 մլն. Եվրո ՀՀ պետ.բյուջեից: Սուբսիդավորվելու են ապահովագրավճարների 60%-ը, այսինքն միայն 40% -ն է վճարվելու ֆերմերի կողմից
- **Տեղական ապահովագրական ընկերությունների մասնակցություն:** Ողջ ծրագրի ընթացքում ակնկալվող ապահովագրավճարը շրջանառվելու է ծրագրին մասնակցել ցանկացող ապահովագրական ընկերությունների կողմից:
- Պետք է լինի ընդհանուր մոտեցում **պատճառի փորձաքննության** և **վնասների գնահատման** հարցում:
- **Վերաապահովագրողի առկայություն:** Ստանձնած ռիսկերի 80%-ը վերապահովագրվելու է Swiss Re ընկերության կողմից:
- ՀՀ-ին բնորոշ առավել ռիսկային բնակլիմայական երևույթի՝ **կարկուտի ռիսկի առկայություն**:
- Պիլոտային ծրագրում ներառված են **Արարատի** և **Արմավիրի** մարզերի խաղողի և ծիրանի այգիները: Հետագա տարիներին նախատեսված է ընդգրկել նաև այլ մարզեր և ավելացնել մշակաբույսերի տեսակները:
- Ներկայացված հայեցակարգով ապահովագրական փոխհատուցման ենթակա են **կարկուտի հետևանքով ֆերմերների կրած վնասները**՝ ըստ նախօրոք ընտրված ապահովագրական գումարների:
- Ներկայացված հայեցակարգում առկա է **բազմաշերտ տեղեկատվություն** մշակաբույսերի, հողատարածքների, ըստ համայնքների տեղակայվածության, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի առկա է հողատարածքների (համայնքների) զոնավորում:

ՀՀ ԿԲ կողմից 2018թ. նոյեմբերին ներկայացված հայեցակարգով առաջարկվող պայմաններով ՀՀ-ում գործող 6 ապահովագրական ընկերություններից ոչ մեկը չհամաձայնվեց անդամակցել ստեղծվող Գյուղատնտեսության ապահավոգարողների գործակալությանը (Բյուրոյին) և որոշակի առաջարկներ եղան մասնավորապես Բյուրոյին պահպանման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը սուբսիդավորելու վերաբերյալ և հավաքագրվելիք ապահովագրավճարների չափերն ավելացնելու վերաբերյալ:

2019թ. հունվարին ՀՀ ԿԲ կողմից կազմակերպվեց ընդլայնված հանդիպում հայեցակարգը մշակած կոնսորցումի մասնակիցների, KFW բանկի, ՀՀ կառավարության և ՀՀ ապահովագրական շուկայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում ներկայացվեց ապահովագրողների կողմից ներկյացված առաջարկների համաձայն որոշակի ճշգրտումների ենթարկված փոփոխված հայեցակարգը:

Առաջարկված հայեցակարգի հիմնական խնդիրները

- **Ոչ բոլոր ապահովագրական ընկերություններն են ցանկանում մասնակցել ներկայացված ծրագրին**,
- Նախատեսվում է **վաճառքն իրականացնել գործակալների միջոցով**:
- Քանի որ, դեռևս **մշակված չեն ապահովագրական պատահարների պատճառի փորձաքննության, ինչպես նաև վնասների գնահատման մեթոդաբանությունը և սկզբունքները**,
- **Չի նշվում ծրագրային ապահովման մասին:**
- **Ծրագիրը չի նախատեսում նաև գոնե 3 տարի հետո բերքի ապահովագրություն**